

## Ա Ր Չ Ա Ն Ա Պ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 8

ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի խորհրդի 2010թ. հունիսի 8-ին  
կայացած թիվ 8 նիստի արձանագրությունից

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Մագիստրատուրայի և բակալավրատի պետական քննությունների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի պաշտպանությունների արդյունքների ամփոփում և պետական քննական հանձնաժողովիների նախագահների հաշվետվություն:
2. 2009-10 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների վիճակը ֆակուլտետում:
3. Ուսանողական սոցիարցումների արդյունքների ամփոփում:
4. Ֆակուլտետին կից ՀՀ ԲՈՀ-ի գրականագիտության 0120 մասնագիտական աստիճանաշնորհող խորհրդի տարեկան գործունեության ամփոփում:

1-ին հարցի առիթով ելույթ ունեցան արդեն ավարտված մագիստրոսական պետական քննական հանձնաժողովի նախագահներ պրոֆ. պրոֆ. Վ. Ներսիսյանը, Տ. Սարգսյանը և Ա. Եղիազարյանը: Նրանք հիմնականում իրենց գոհունակությունը հայտնեցին քննություններից ու արեցին արդյունավետ որոշ առաջարկություններ (նրանց հաշվետվությունները կցվում են):

2-րդ հարցի առիթով ելույթ ունեցավ հայ բանասիրության դեկանի տեղակալ դոց. Արտաշես Սարգսյանը: Նա մասնավորապես նշեց, որ նոր տեղեկագրերը հաճախ շփոթի մեջ են գցում դասախոսներին: Վերջիններս պիտի ուշադիր լինեն, որպեսզի ուսումնական վարչությունը բացատրագրեր չպահանջի:

3-րդ հարցի առիթով Ավագյանն ընթերցեց սոցիարցումների արդյունքները:

4-րդ հարցի առիթով պրոֆ. Ժ. Քալանթարյանը գեկուցեց ՀՀ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի աշխատանքների մասին: Նա մասնավորապես նկատեց, որ տարին եղել է գերհագեցած, առայժմ ԲՈՀ-ի կողմից չի կատարվել որևէ դիտողություն, և ոչ մի ատենախոսություն չի մերժվել: 2009-2010թթ. խորհրդում պաշտպանվել է 19 ատենախոսություն /կից ներկայացվում է հաշվետվությունը/:

**Ընթացիկ հարցեր.**

**Լ Ս Ե Ց Ի Ն.**- Հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրատի շրջանավարտ Էլլա Բորիսի Պողոսյանին Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայի ընդունելության քննություններին մասնակցելու երաշխավորության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**- Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Զ. Ավետիսյանը, Վ. Գաբրիելյանը և Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ Էլլա Պողոսյանը բակալավրատում և սովորելու տարիներին դրսևորել է բարձր առաջադիմություն, աչքի ընկել միայն լավագույն կողմերով: Նա օժտված է գրականագիտական ձիրքով և հաջողությամբ կարող է ուսումը շարունակել մագիստրատուրայում:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն.**- Երաշխավորել Էլլա Բորիսի Պողոսյանին՝ մասնակցելու Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայի ընդունելության քննություններին:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**